ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2025 թվականի N 204-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 04-ի իններորդ նստաշրջանի արտահերթ չորրորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

2) Աբովյան համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 26-ի N 4682 որոշումն ու Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին.

3) Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2025 թվականի համար հաստատելու մասին.

4) Աբովյան համայնքի հաշվեկշռից մանկապարտեզի գույքն Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռում ընդգրկելու մասին.

5) Աբովյանի համայնքապետարանի և Աբովյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում առկա ոչ պիտանի հիմնական միջոցների դուրս գրման մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 04
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2025 թվականի N 205-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 60-րդ, 64-րդ կետերի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 21-ի N 2/փ-339 և N 2/փ-344, հոկտեմբերի 22-ի N 2/փ-351, հոկտեմբերի 24-ի N 2/փ-356 դրական եզրակացությունները, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի N 01/03.1/10212-2025 գրությունը (մուտք՝ 2025 թվականի հոկտեմբերի 27-ի N Պ-3143), հոկտեմբերի 31-ի N 01/03.1/10443-2025 գրությունը (մուտք՝ 2025 թվականի նոյեմբերի 03-ի N Պ-3208), հոկտեմբերի 31-ի N 01/03.1/10445-2025 գրությունը (մուտք՝ 2025 թվականի նոյեմբերի 03-ի N Պ-3211) և նոյեմբերի 05-ի N 01/03.1/10575-2025 գրությունը (մուտք՝ 2025 թվականի նոյեմբերի 05-ի N Պ-3242) Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին» N 111-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված հավելվածի գծագրական և տեքստային մասում՝ Աբովյան քաղաքի գոտևորման հատակագծում Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Բարեկամության հրապարակ 8 հասցեում գտնվող 07-002-0121-0037 կադաստրային ծածկագրով 0,3085 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի համար սահմանել 2 ստորգետնյա և 16 վերգետնյա հարկայնությամբ բարձրահարկ բնակելի

կառուցապատման գոտի՝ ԲՆԿԳ-4,
2) որոշմամբ հաստատված հավելվածի գծագրական և տեքստային մասում՝ Առինջ բնակավայրի գոտևորման հատակագծում Աբովյան համայնքի Առինջ գյուղի Խ. Աբովյան թաղամասի 10-րդ փողոցի 7 հասցեում գտնվող 07-011-0358-0139 կադաստրային ծածկագրով 0,105 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի համար սահմանված ցածր հարկայնության բնակելի կառուցապատման գոտին փոփոխել 4-5 վերգետնյա հարկայնությամբ միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտու՝ ԲՆԿԳ-3,
3) որոշմամբ հաստատված հավելվածի գծագրական և տեքստային մասում՝ Առինջ բնակավայրի տարածքի գոտևորման հատակագծում Աբովյան համայնքի Առինջ գյուղի Մ. Մկրտչյան թաղամասի 1-ին փողոցի 32 հասցեում գտնվող 07-011-0274-0012 կադաստրային ծածկագրով 1,258926 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի համար սահմանված 4-5 վերգետնյա հարկով միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտին փոփոխել 6-9 վերգետնյա հարկով միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտու՝ ԲՆԿԳ-3,
4) որոշմամբ հաստատված հավելվածի գծագրական և տեքստային մասում՝ Աբովյան քաղաքի գոտևորման հատակագծում Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Բարեկամության հրապարակ 8/3 հասցեում գտնվող 07-002-0121-0038 կադաստրային ծածկագրով 0,3085 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի համար սահմանել 2 ստորգետնյա և 16 վերգետնյա հարկայնությամբ բարձրահարկ բնակելի կառուցապատման գոտի՝ ԲՆԿԳ-4:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 04
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2025 թվականի N 206-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 4682 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, 81-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Հաստատել՝

1) Աբովյան համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 26-ի «Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 4682 որոշումը:

2) Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Աբովյան համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կազմակերպության կանոնադրությունը գրանցելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 04
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 04-ի N 206-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
«ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2025թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Աբովյան համայնքի **«Բալահովիտ գյուղի** մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական հիմնական, այդ թվում՝ այլընտրանքային, հեղինակային և միջազգային կրթական ծրագիր՝ նախադպրոցական կրթության առնվազն մեկ տեսակով:

Հաստատության հիմնադիրն է Աբովյան համայնքը:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ 2213, մարզ Կոտայք, համայնք Աբովյան, գյուղ Բալահովիտ, Լ. Ավետիսյան փողոց 1-ին նրբանցք 9/1:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ «Детский сад села Балаовит» общинная некоммерческая организация Абовянской общины.

4) ռուսերեն կրճատ՝ «Детский сад села Балаовит» ОНКО Абовянской общины.

5) անգլերեն լրիվ՝ “Kindergarden in Balaovit Village” of Abovyan Community Non-Profit Communal Organization.

6) անգլերեն կրճատ՝ “Kindergarden in Balaovit Village”of Abovyan Community NPCO:

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունը կարող է ունենալ պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) և ներքին գնահատման հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական

կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու կամ նախադպրոցական ծառայություններ մատուցելու միջոցով:

13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, սանի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձևավորումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս ներառվում են՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած նորմերը:

19. Հաստատությունը, հիմնադրի համաձայնությամբ, կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) մասնագիտական վերապատրաստումների և խորհրդատվությունների, ծնողական կրթությանը միտված դասընթացների և ծրագրերի իրականացում.

3) ճկուն ռեժիմով սանին սպասարկելու ծառայություններ.

4) սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք.

5) սաների կազմակերպված տրանսպորտային փոխադրումներ.

6) երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) և ուսումնական նյութերին համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է ծրագրային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և նպատակաուղղված են յուրաքանչյուր սանի գիտելիքի, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը:

22. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Երեխայի ընդունելությունը հաստատություն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ ծնողի (սանի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (սանի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա:

24. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

25. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից և ավարտվում օգոստոսի 31-ին: Տարիքային խմբերում սաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

26. Տարիքային խմբերի ձևավորումը և սաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

27. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

28. Հաստատությունը, ըստ իր տեսակի, մանկապարտեզ է՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ:

29. Հաստատության աշխատանքային ռեժիմը, տարիքային խմբերի թիվը, հաստատությունում սաների մնալու տևողությունը սահմանվում է լիազորված պետական մարմնի որոշմամբ՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

31. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի կողմից, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ և համաճարակային միջոցառումների իրականացման, հիգիենիկ նորմատիվների պահպանման և սննդի որակի համար:

32. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

4. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

33. Հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (սանի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, հոգեբանը, հատուկ մանկավարժը, սոցիալական մանկավարժը, ֆիզկուլտուրայի հրահանգիչը, երաժշտության դաստիարակը, բուժաշխատողը, լրացուցիչ կրթական ծառայության մանկավարժը և այլ մանկավարժական աշխատողներ:

34. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրենը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել հաստատության կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

35. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

36. Սանի և հաստատության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

37. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների անվանացանկին և պաշտոնների նկարագրերին:

38. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

39. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը և տնօրենը՝ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

40. Հաստատության հիմնադրի լիազորությունները սահմանված են «Նախադպրոցական կրթության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

41. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

42. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և պաշտոնի նկարագրով իրեն վերապահված

այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

43. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր կարգադրության համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ հաստիքի բացակայության դեպքում՝ բարձրագույն կրթություն և 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

44.Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական և ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

45. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է օգոստոսի 20-ից 30-ը:

46. Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով:

47. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

48. Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է հաստատության տնօրենը, որն ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է:

49. Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է մանկավարժական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ ընտրված մշտական քարտուղարը, որի բացակայության դեպքում տվյալ նիստն արձանագրելու համար ընտրվում է նոր քարտուղար: Քարտուղարը պատասխանատու է մանկավարժական խորհրդի արձանագրությունների պատշաճ կազմման համար: Նիստի արձանագրությունը կազմվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում և ստորագրվում խորհրդի նախագահի ու քարտուղարի կողմից: Մանկավարժական խորհրդի նիստը հնարավորության կամ անհրաժեշտության դեպքում կարող է ձայնագրվել:

50. Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝

1) տնօրենի նախաձեռնությամբ.

2) մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.

3) լիազորված մարմնի նախաձեռնությամբ:

51. Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են:

52. Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ:

53. Հաստատության տնօրենը մանկավարժական խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ մանկավարժական աշխատողներին գրավոր ծանուցմամբ (բացառությամբ արտահերթ նիստերի) տեղեկացնում է մանկավարժական խորհրդի նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին:

54. Մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

55. Մանկավարժական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

56. Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

57. Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:

58. Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝

1) հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի.

2) օրվա կանոնակարգի և պարապմունքների բաշխման ցանկի, օգտագործվող ծրագրամեթոդական գրականության.

3) ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման տարբերակների.

4) սաների տարիքային խմբերի համակազմի վերաբերյալ և ներկայացնում տնօրենի հաստատմանը:

59. Հաստատության ծնողական խորհուրդը կազմավորվում է տարիքային խմբերի ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

60. Հաստատության ծնողական խորհրդի նախագահը խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ խորհրդի անդամներին պատշաճ ծանուցմամբ տեղեկացնում է նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին: Ծնողական խորհրդի որոշմամբ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ: Ծնողական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր:

61. Ծնողական խորհուրդների նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ:

62. Ծնողական խորհուրդների յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

63. Տարիքային խմբերի ծնողական խորհուրդների նիստերին մասնակցում են դաստիարակները, իսկ հաստատության ծնողական խորհրդի նիստերին՝ տնօրենը:

64. Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն հաստատության ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են ժողովներ՝ առնվազն չորս անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդների և մանկավարժական աշխատողների նախաձեռնությամբ կարող են հրավիրվել արտահերթ ծնողական ժողովներ:

65. Հաստատության ծնողական խորհուրդը՝

1) մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սաների առօրյայի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ.

2) աջակցում է հաստատությանը՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում.

3) լսում է տնօրենի հաղորդումը հաստատության գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները.

4) ամրապնդում է հաստատության և ծնողների միջև կապերը, մանկավարժական աշխատողների հետ ձևավորում և ծնողներին է ներկայացնում սաների դաստիարակության նկատմամբ միասնական պահանջներ.

5) մասնակցում է ծնողազուրկ և սոցիալապես անապահով սաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին.

6) ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը հաստատությունում.

7) ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ.

8) ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվությանը.

9) համագործակցում է հաստատության մանկավարժական և այլ խորհուրդների հետ:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

66. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

67. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

68. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

69. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

70. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

71. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

72. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

73. Համայնքային սեփականություն համարվող հաստատության շենքը կարող է օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

74. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

75. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

76. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

77. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

78. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

79. Հաստատության՝ պետական բյուջեից ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

80. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

81. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

82. Հաստատության վերակազմակերպումը և լուծարումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2025 թվականի N 4682

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, հաշվի առնելով Աբովյան համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 19-ի N 538 կարգադրությունը.

1. Հիմնադրման միջոցով ստեղծել Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ Կազմակերպություն):

2. Սահմանել, որ Կազմակերպության գործունեության առարկան ու նպատակներն են՝

1) Կազմակերպության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու կամ նախադպրոցական ծառայություններ մատուցելու միջոցով:

2) Կազմակերպության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

3) Կազմակերպության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

4) Կազմակերպությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, սանի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձևավորումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

5) Կազմակերպության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

6) Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

7) Կազմակերպության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս ներառվում են՝

ա. կազմակերպության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

բ. մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

գ. սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած նորմերը.

դ. սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած նորմերը:

3. Կազմակերպությունը, հիմնադրի համաձայնությամբ, կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) մասնագիտական վերապատրաստումների և խորհրդատվությունների, ծնողական կրթությանը միտված դասընթացների և ծրագրերի իրականացում.

3) ճկուն ռեժիմով սանին սպասարկելու ծառայություններ.

4) սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք.

5) սաների կազմակերպված տրանսպորտային փոխադրումներ.

6) երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք:

4. Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնել գույք՝ համաձայն հավելվածի:

5. Կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել Աբովյանի համայնքային սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի Լ. Ավետիսյան փողոցի 1-ին նրբանցքի 9/1 հասցեում գտնվող անշարժ գույքը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն հաստատելու մասին Աբովյան համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՁԱՐՈՅԱՆ**

2025թ. նոյեմբերի 26

ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ղեկավարի
2025 թվականի նոյեմբերի 26-ի N 4682 որոշման

ՑԱՆԿ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

(դրամ)

հ/հ	Անվանում	Չափման միավոր	Քանակ	Գումար
1	Մանկական զգեստապահարան	հատ	12	694 584
2	Երեխաների կոշիկները փոխելու համար նստարաններ	հատ	12	346 668
3	Մանկական սեղան՝չորստեղանի /4-5 տարիքային խմբի համար/	հատ	8	140 800
4	Մանկական սեղան՝չորստեղանի /5-6 տարիքային խմբի համար/	հատ	8	150 400
5	Մանկական աթոռ /4-5 տարիքային խմբի համար/	հատ	35	628 075
6	Մանկական աթոռ /5-6 տարիքային խմբի համար/	հատ	35	896 910
7	Գրասեղան	հատ	3	100 236
8	Աշխատանքային աթոռ	հատ	6	81 036
9	Գրապահարան	հատ	2	100 086
10	Զգեստապահարան աշխատակիցների համար	հատ	2	80 680
11	Գրատախտակ շարժական /Ֆլիպչարտ/	հատ	2	112 290
12	Աշխատանքային կենտրոն /պահարաններ զարգացնող միջավայրի համար/	հատ	2	184 800
13	Եռահարկ մահճակալ՝ ներքնակներով	հատ	20	1 821 180
14	Պահարան՝ սպիտակեղենի համար	հատ	2	110 070
15	Բջջակ պահարան /սանհանգույցի սրբիչի կախիչ/	հատ	6	266 088
16	Զուգարանի թղթի ամրակ	հատ	4	11 912
17	Պահարան՝ տնտեսական պարագաների համար	հատ	2	89 406
18	Պահարան ներկառուցված երկբնանի լվացարանով	հատ	2	293 102
19	Սննդի մշակման սեղան	հատ	2	134 042
20	Պատրաստի սննդի բաշխման մեծ սեղան /ակերով/	հատ	2	111 880
21	Պահարան սպասքի համար	հատ	2	94 562
22	Պահարան - չորանոց	հատ	2	159 320
23	Ղեկավարի աթոռ	հատ	1	95 000

24	Աշխատանքային աթոռ	հատ	4	100 000
25	Գրապահարան	հատ	1	115 772
26	Զգեստապահարան	հատ	1	117 334
27	Օդորակիչ	հատ	1	285 000
28	Մանկական աթոռներ /5-6 տարիքային խմբի համար/	հատ	60	732 660
29	Աշխատանքային կենտրոն /պահարան՝ դիդակտիկ նյութերի համար/	հատ	1	100 000
30	Աշխատանքային աթոռ միջոցառումների համար	հատ	10	117 000
31	Շվեդական պատ	հատ	2	132 800
32	Մարմնամարզական նստարան	հատ	4	143 440
33	Փափուկ մատեր /սպորտային մատրաս/	հատ	4	61 112
34	Օղակներ	հատ	30	52 020
35	Գնդակներ	հատ	15	118 800
36	Բուլավաներ	հատ	20	16 000
37	Երաժշտական կենտրոն	հատ	1	130 000
38	Հացի պահման պահարան	հատ	1	86 667
39	Էլեկտրական սալօջախ եռաֆազ	հատ	1	450 000
40	Սննդի դուրս գրման սառնարան	հատ	1	260 000
41	Սննդի մշակման սեղան	հատ	5	297 000
42	Սննդի մշակման մետաղյա սեղան	հատ	2	250 000
43	Բանջարեղեն կտրելու եռաֆազ մեքենա	հատ	1	495 000
44	Կարտոֆիլի կեղևահանման եռաֆազ սարք	հատ	1	470 000
45	Խմորի ապիռալաձև եռաֆազ հարիչ /25կգ. խմորի տարողությամբ/	հատ	1	819 980
46	Սպասք լվանալու եռաֆազ մեքենա	հատ	1	890 000
47	Չժանգոտվող պողպատից դարակ 900*500*1600	հատ	1	109 200
48	Պահարան սպասքի համար	հատ	2	237 036
49	Փոքր կաթսաներ	հատ	2	13 086
50	Կաթսա մետաղական 1	հատ	1	7 176
51	Կաթսա մետաղական 2	հատ	1	14 941
52	Կաթսա մետաղական 3	հատ	1	24 500
53	Կաթսա մետաղական 4	հատ	2	89 332
54	Սննդի տարաներ	հատ	14	63 000
55	Թասեր	հատ	10	29 600

56	Քամիչներ փլավքամիչներ	հատ	2	11 066
57	Քամիչ-Մաղ	հատ	1	1 600
58	Հարիչ ձեռքի	հատ	1	1 500
59	Շերեփ	հատ	4	6 392
60	Խավարտի գդալ	հատ	2	2 818
61	Քափկիր	հատ	2	2 400
62	Խառնիչներ	հատ	2	2 240
63	Կարտոֆիլի ճզմիչ	հատ	1	1 800
64	Խոհանոցային դանակներ	հատ	10	42 000
65	Սնունդ կտրարելու տախտակ՝ փայտյա կամ սննդի համար նախատեսված նյութից	հատ	2	32 222
66	Չափիչ բաժակ բաժնեչափով 1	հատ	1	1 800
67	Չափիչ բաժակ բաժնեչափով 2	հատ	1	1 500
68	Ջերմաչափեր ճաշի	հատ	2	5 400
69	Ջերմաչափեր սենյակի	հատ	2	3 400
70	Դույլ պլաստմասե	հատ	6	9 000
71	Սննդի տարաներ	հատ	4	11 868
72	Աղբարկղ պլաստմասե	հատ	4	12 000
73	Հատակ մաքրելու ձող,փայտյա	հատ	2	6 000
74	Հարթակով կշեռք	հատ	1	27 750
75	Էլեկտրական կշեռք	հատ	1	17 250
76	Դարակաշարեր /մթերքը տեղավորելու համար/	հատ	1	100 000
77	Մատուցման և բաշխման սեղան	հատ	1	64 350
78	Սառնարանային տնտեսություն	հատ	4	978 532
79	Սառցարան 200լ.	հատ	1	143 680
80	Օդորակիչ	հատ	1	144 796
81	Փոշեկուլ	հատ	1	48 670
82	Գրասեղան	հատ	1	44 460
83	Աշխատանքային աթոռ 2	հատ	2	46 668
84	Հասակաչափ	հատ	1	16 934
85	Կշեռք	հատ	1	49 333
86	Բժշկական թախտ	հատ	1	82 667

87	Տեսողության ստուգման աղյուսակ (Օրլովայի կամ Գոլովին - Սիվցևի աղյուսակ)	հատ	1	45 000
88	Տոնոմետր	հատ	1	20 000
89	Բժշկական ջերմաչափ (էլեկտրոնային)	հատ	2	6 000
90	Ապակե պահարան՝ առաջին օգնության անհրաժեշտ դեղորայքի համար	հատ	1	100 000
91	Փոքրիկ սառնարան դեղորայքի համար	հատ	1	80 000
92	Լվացքի մեքենա	հատ	1	241 530
93	Լվացքի չորանոց -մեքենա	հատ	1	348 340
94	Արդուկի սեղան	հատ	1	20 000
95	Սպիտակեղենի պահարան-յուրաքանչյուր խմբի համար	հատ	2	22 468
96	Համակարգիչ	հատ	1	266 000
97	Անխափան սնուցման սարք UPS	հատ	1	21 333
98	Տպիչ սարք	հատ	1	349 400
99	Wi-Fi Router	հատ	1	14 999
100	Դյուրակիր համակարգիչ	հատ	1	225 067
101	Պրոյեկտոր	հատ	1	185 000
102	Էլեկտրոնային դաշնամուր	հատ	1	239 880
103	Սեղան ղեկավարի	հատ	1	123 200
104	Փաստաթղթերի պահման պահարան	հատ	1	115 900
105	Գունավոր տպիչ	հատ	1	349 400
106	Օդափոխման սարքավորումներ	հատ	1	398 900
Ընդամենը				**18 624 096**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2025 թվականի N 207-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2025 թվականի համար՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանակապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցում ստանալու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱՀՐԱ

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 04
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 04-ի
N 207- Ա որոշման

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1.Աշխատողների քանակը՝ 18

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Դրույքի չափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ (դրամ)
1	Տնօրեն	1	240 000	240 000
2	Մեթոդիստ, ուսումնական գծով տնօրենի տեղակալ	0,25	190 000	47 500
3	Դաստիարակ	2,5	125 000	312 500
4	Երաժշտական ղեկավար	0,5	125 000	62 500
5	Լոգոպեդ	0,5	115 000	57 500
6	Հոգեբան	0,5	115 000	57 500
7	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0,5	115 000	57 500
8	Պարուսույց	0,5	115 000	57 500
9	Դաստիարակի օգնական	2,2	125 000	275 000
10	Բուժքույր	0,5	160 000	80 000
11	Գլխավոր հաշվապահ	0,5	180 000	90 000
12	Տնտեսվար	0,5	140 000	70 000
13	Խոհարար	1	120 000	120 000
14	Խոհարարի օգնական	0,5	120 000	60 000
15	Օժանդակ բանվոր	0,5	115 000	57 500
16	Հավաքարար	0,5	115 000	57 500
17	Պահակ	3	115 000	345 000
19	Լվացարար	0,25	115 000	28 750
18	Դռնապան	1	115 000	115 000
	Ընդամենը	**16,7**		**2 191 250**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2025 թվականի N 208-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌԻՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՒՅՔՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Աբովյան համայնքի հաշվեկշռից 18 624 096 (տասնութ միլիոն վեց հարյուր քսանչորս հազար իննսունվեց) դրամ հաշվեկշռային արժեքով գույքն ընդգրկել Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռում՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանակապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցում ստանալու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 04
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան ամայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 04- ի
N 208-Ա որոշման

Ցանկ
Աբովյան համայնքի «Բալահովիտ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքի

հ/հ	Անվանում	Չափման միավոր	Քանակ	Գին (դրամ)	Հաշվեկշռային արժեք (դրամ)
1	Մանկական զգեստապահարան	հատ	12	57 882	694 584
2	Երեխաների կոշիկները փոխելու համար նստարաններ	հատ	12	28 889	346 668
3	Մանկական սեղան՝չորստեղանի/4-5 տարիքային խմբի համար/	հատ	8	17 600	140 800
4	Մանկական սեղան՝չորստեղանի/5-6 տարիքային խմբի համար/	հատ	8	18 800	150 400
5	Մանկական աթոռ/4-5 տարիքային խմբի համար/	հատ	35	17 945	628 075
6	Մանկական աթոռ/5-6 տարիքային խմբի համար/	հատ	35	25 626	896 910
7	Գրասեղան	հատ	3	33 412	100 236
8	Աշխատանքային աթոռ	հատ	6	13 506	81 036
9	Գրապահարան	հատ	2	50 043	100 086
10	Զգեստապահարան աշխատակիցների համար	հատ	2	40 340	80 680
11	Գրատախտակ շարժական/Ֆլիպչարտ/	հատ	2	56 145	112 290
12	Աշխատանքային կենտրոն/պահարաններ զարգացնող միջավայրի համար/	հատ	2	92 400	184 800
13	Եռահարկ մահճակալ՝ներքնակներով	հատ	20	91 059	1 821 180
14	Պահարան ՝սպիտակեղենի համար	հատ	2	55 035	110 070
15	Բջջակ պահարան/սանհանգույցի սրբիչի կախիչ/	հատ	6	44 348	266 088
16	Զուգարանի թղթի ամրակ	հատ	4	2 978	11 912
17	Պահարան՝տնտեսական պարագաների համար	հատ	2	44 703	89 406
18	Պահարան ներկառուցված երկբնանի լվացարանով	հատ	2	146 551	293 102

հ/հ	Անվանում	Չափման միավոր	Քանակ	Գին (դրամ)	Հաշվեկշռային արժեք (դրամ)
19	Սննդի մշակման սեղան	հատ	2	67 021	134 042
20	Պատրաստի սննդի բաշխման մեծ սեղան/ակերով/	հատ	2	55 940	111 880
21	Պահարան սպասքի համար	հատ	2	47 281	94 562
22	Պահարան - չորանոց	հատ	2	79 660	159 320
23	Ղեկավարի աթոռ	հատ	1	95 000	95 000
24	Աշխատանքային աթոռ	հատ	4	25 000	100 000
25	Գրապահարան	հատ	1	115 772	115 772
26	Զգեստապահարան	հատ	1	117 334	117 334
27	Օդորակիչ	հատ	1	285 000	285 000
28	Մանկական աթոռներ/5-6 տարիքային խմբի համար/	հատ	60	12 211	732 660
29	Աշխատանքային կենտրոն/պահարան՝ դիդակտիկ նյութերի համար/	հատ	1	100 000	100 000
30	Աշխատանքային աթոռ միջոցառումների համար	հատ	10	11 700	117 000
31	Շվեդական պատ	հատ	2	66 400	132 800
32	Մարմնամարզական նստարան	հատ	4	35 860	143 440
33	Փափուկ մատեր /սպորտային մատրաս/	հատ	4	15 278	61 112
34	Օղակներ	հատ	30	1 734	52 020
35	Գնդակներ	հատ	15	7 920	118 800
36	Բուլավաներ	հատ	20	800	16 000
37	Երաժշտական կենտրոն	հատ	1	130 000	130 000
38	Հացի պահման պահարան	հատ	1	86 667	86 667
39	Էլեկտրական սալօջախ եռաֆազ	հատ	1	450 000	450 000
40	Սննդի դուրս գրման սառնարան	հատ	1	260 000	260 000
41	Սննդի մշակման սեղան	հատ	5	59 400	297 000
42	Սննդի մշակման մետաղյա սեղան	հատ	2	125 000	250 000
43	Բանջարեղեն կտրելու եռաֆազ մեքենա	հատ	1	495 000	495 000
44	Կարտոֆիլի կեղևահանման եռաֆազ սարք	հատ	1	470 000	470 000
45	Խմորի ապիռալաձև եռաֆազ հարիչ/25կգ. խմորի տարողությամբ/	հատ	1	819 980	819 980
46	Սպասք լվանալու եռաֆազ մեքենա	հատ	1	890 000	890 000
47	Չժանգոտվող պողպատից դարակ 900*500*1600	հատ	1	109 200	109 200

հ/հ	Անվանում	Չափման միավոր	Քանակ	Գին (դրամ)	Հաշվեկշռային արժեք (դրամ)
48	Պահարան սպասքի համար	հատ	2	118 518	237 036
49	Փոքր կաթսաներ	հատ	2	6 543	13 086
50	Կաթսա մետաղական 1	հատ	1	7 176	7 176
51	Կաթսա մետաղական 2	հատ	1	14 941	14 941
52	Կաթսա մետաղական 3	հատ	1	24 500	24 500
53	Կաթսա մետաղական 4	հատ	2	44 666	89 332
54	Սննդի տարաներ	հատ	14	4 500	63 000
55	Թասեր	հատ	10	2 960	29 600
56	Քամիչներ փլավքամիչներ()	հատ	2	5 533	11 066
57	Քամիչ-Մաղ	հատ	1	1 600	1 600
58	Հարիչ ձեռքի	հատ	1	1 500	1 500
59	Շերեփ	հատ	4	1 598	6 392
60	Խավարտի գդալ	հատ	2	1 409	2 818
61	Քափկիր	հատ	2	1 200	2 400
62	Խառնիչներ	հատ	2	1 120	2 240
63	Կարտոֆիլի ճզմիչ	հատ	1	1 800	1 800
64	Խոհանոցային դանակներ	հատ	10	4 200	42 000
65	Սնունդ կտրարելու տախտակ՝փայտյա կամ սննդի համար նախատեսված նյութից	հատ	2	16 111	32 222
66	Չափիչ բաժակ բաժնեչափով 1	հատ	1	1 800	1 800
67	Չափիչ բաժակ բաժնեչափով 2	հատ	1	1 500	1 500
68	Ջերմաչափեր ճաշի	հատ	2	2 700	5 400
69	Ջերմաչափեր սենյակի	հատ	2	1 700	3 400
70	Դույլ պլաստմասե	հատ	6	1 500	9 000
71	Սննդի տարաներ	հատ	4	2 967	11 868
72	Աղբարկղ պլաստմասե	հատ	4	3 000	12 000
73	Հատակ մաքրելու ձող,փայտյա	հատ	2	3 000	6 000
74	Հարթակով կշեռք	հատ	1	27 750	27 750
75	Էլեկտրական կշեռք	հատ	1	17 250	17 250
76	Դարակաշարեր /մթերքը տեղավորելու համար/	հատ	1	100 000	100 000

h/h	Անվանում	Չափման միավոր	Քանակ	Գին (դրամ)	Հաշվեկշռային արժեք (դրամ)
77	Մատուցման և բաշխման սեղան	հատ	1	64 350	64 350
78	Սառնարանային տնտեսություն	հատ	4	244 633	978 532
79	Սառցարան 200լ.	հատ	1	143 680	143 680
80	Օդորակիչ	հատ	1	144 796	144 796
81	Փոշեկուլ	հատ	1	48 670	48 670
82	Գրասեղան	հատ	1	44 460	44 460
83	Աշխատանքային աթոռ 2	հատ	2	23 334	46 668
84	Հասակաչափ	հատ	1	16 934	16 934
85	Կշեռք	հատ	1	49 333	49 333
86	Բժշկական թախտ	հատ	1	82 667	82 667
87	Տեսողության ստուգման աղյուսակ (Օրլովայի կամ Գոլովին - Սիվցևի աղյուսակ)	հատ	1	45 000	45 000
88	Տոնոմետր	հատ	1	20 000	20 000
89	Բժշկական ջերմաչափ (էլեկտրոնային)	հատ	2	3 000	6 000
90	Ապակե պահարան՝առաջին օգնության անհրաժեշտ դեղորայքի համար	հատ	1	100 000	100 000
91	Փոքրիկ սառնարան դեղորայքի համար	հատ	1	80 000	80 000
92	Լվացքի մեքենա	հատ	1	241 530	241 530
93	Լվացքի չորանոց -մեքենա	հատ	1	348 340	348 340
94	Արդուկի սեղան	հատ	1	20 000	20 000
95	Սպիտակեղենի պահարան-յուրաքանչյուր խմբի համար	հատ	2	11 234	22 468
96	Համակարգիչ	հատ	1	266 000	266 000
97	Անխափան սնուցման սարք UPS()	հատ	1	21 333	21 333
98	Տպիչ սարք	հատ	1	349 400	349 400
99	Wi-Fi Router	հատ	1	14 999	14 999
100	Դյուրակիր համակարգիչ	հատ	1	225 067	225 067
101	Պրոյեկտոր	հատ	1	185 000	185 000
102	Էլեկտրոնային դաշնամուր	հատ	1	239 880	239 880
103	Սեղան ղեկավարի	հատ	1	123 200	123 200
104	Փաստաթղթերի պահման պահարան	հատ	1	115 900	115 900
105	Գունավոր տպիչ	հատ	1	349 400	349 400
106	Օդափոխման սարքավորումներ	հատ	1	398 900	398 900
	Ընդամենը			**10 316 502**	**18 624 096**